ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 մարտի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

30
(2696)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

10 ՏԱՐԻ ԱՆՑ ԴԵՊՔԵՐԸ ՉԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

Այսօր լրացավ 2008 թվականի արյունալի մարտի 1-ի սպանությունների 15-րդ տարելիցը: Երեւանի կենտրոնում գնդակահարված քաղաքացիների սպանությունները առ այսօր բացահայտված չեն, թեեւ Նիկոլ Փաշինյանը վաղուց խոստացել էր բացահայտել «ուչաստկովիի մակարդակի գործը»: 2018 սեպտեմբերի 11-ին, երբ հայտնի գաղտնալսման օրը ՀՔԾ-ի՝ այսօրվա Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Սասուն Խաչատրյանը ԱԱԾ տնօրենի հետ հրավիրել էր մամուլի ասուլիս, ամենայն լրջությամբ հայտարարեց. «Հստակ ապացույցներ ունենք, որ հատուկ ջոկատայինների կողմից է սպանվել, երբ արդեն մտցրել էր Քոչարյանը արտակարգ դրություն, բայց որեւէ հրազենային վիրավորում ստացած զինծառայող չկար... Մեր վերսիան է՝ Տիգրան Աբգարյանին հրազենային վնասվածք է հասցվել, որ Քոչարյանի խոսքերը, թե մենք արդեն ունենք զոհեր, հիմնավորվեն: Այս փաստը հիմնավորված է նախաքննության տվյալներով»: Առ այսօր այդ հիմնավորման մասին ոչինչ չգիտի հանրությունը, իսկ Ռոբերտ Քոչարյանը ՍԴ դատավճռով ամբողջությամբ մաքրագործվել է մարտի 1-ին առնչվող բոլոր մեղադրանքներով. ՍԴ-ն համարեց, որ առաջադրված հոդվածը եղել է ապօրինի: Սա միակ ապտակը չէր, որ հասցվեց Սասուն Խաչատրյանին: Նա իր պաշտոնավարման ընթացքում միշտ, հատկապես՝ «Մարտի 1»-ի գործով արել է տարբեր հայտարարություններ, որոնք, հետագայում պարզվել են, սուտ էին կամ չհիմնավորված: Որպես օրինակ՝ այդ ասուլիսից մեկ այլ դրվագ հիշենք. «ՀՀ ՊՆ պահեստից համազգեստներ են բաժանվել օլիգարխների թիկնազորներին. ում, ինչի համար՝ այս պահին չեմ ասի: Քննության ավարտին կտեղեկանաք»- հայտարարեց Սասուն Խաչատրյանը: Այս օրվանից անցել է 5 տարի, սակայն Սասուն Խաչատրյանը չի հայտարարել, թե ովքեր էին այդ օլիգարխները, որոնք իրենց թիկնազորին հագցրել էին համազգեստ եւ բաց թողել ժողովրդի մեջ: Ավելին՝ այդ օլիգարխներից որոշների հետ ուժային կառույցների շատ ղեկավարներ տարբեր պետական միջոցառումների են մասնակցել: Վերջում հավելենք, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք ոչ Սասուն Խաչատրյանը, ոչ նախկին դատախազ Արթուր Դավթյանը, ոչ էլ գործող դատախազ Աննա Վարդապետյանը «Մարտի 1»-ի գործով որեւէ սպանություն չեն բացահայտել մինչ օրս: Որեւէ մարդասպան չհայտնվեց ճաղերի հետեւում: Թեեւ Նիկոլ Փաշինյանի թիմակիցները փորձում են մարտի 1-ի զոհերին նվիրված հուշարձան տեղադրել, բայց պետք է ընդգծել, որ Փաշինյանը իշխանության եկավ «Մարտի 1»-ի բացահայտման, այլ ոչ թե այդ առիթով արձան տեղադրելու խոստումով:



ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը երթեւեկում է օպերատիվ համարանիշներով: «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է Քոչարյանին խորհրդարան աշխատանքի գալիս ինչ-որ կասկածելի խառը համարանիշի համարանիշներով ԱԺ ծառայողական ավտոմեքենայով: Դրանք ամենեւին ԱԺ բալանսում գտնվող համարանիշներ չեն. պարզվեց՝ այլ ուժայիններին են պատկանում: Պարզվում է՝ այն օպերատիվ պետհամարանիշ է, որը ենթադրում է անխափան երթեւեկություն, այսինքն՝ վարորդը կարող է ավտոմեքենան արագ վարել, հոծ գիծ հատել, երկրորդ շարքով կանգնել եւ այլն, բայց չտուգանվել, քանի որ տեսախցիկներն օպերատիվ պետհամարանիշների խախտումները չեն գրանցում, այլ դրանք հիմնավորում են իբրեւ ծառայողական անհրաժեշտություն: Ստացվում է՝ Անդրանիկ Քոչարյանն իրեն արտոնյալի կարգավիճակ է վերապահել, հատուկ պետհամարանիշով մեքենայով է շրջում, որպեսզի պատասխանատվության չենթարկվի: Ի դեպ, պատգամավորին օպերատիվ համարանիշ ունենալու իրավունք տրված չէ. այն ունենալու իրավունք ունեն միայն օպերատիվ աշխատողները՝ ոստիկաններ, քննիչներ, ԱԱԾ աշխատակիցներ եւ այլն: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ Անդրանիկ Քոչարյանից հետաքրքրվեց՝ ով է տրամադրել օպերատիվ պետհամարանիշները իրեն, սակայն պատգամավորը հերքեց «անհերքելին»՝ ասելով, թե չունի օպերատիվ համարանիշ: Հիշեցնենք, որ նախկինում, երբ Առաքել Մովսիսյանը՝ Շմայսը, կամ այլ օդիոզ դեմքեր ՊՆ համարանիշներով էին շրջում, Նիկոլ Փաշինյանն ու հեղափոխական թիմը կոկորդ էին պատռում, թե արտոնյալներ չպիտի լինեն: Հիմա հարց՝ ո՞վ, ինչո՞ւ եւ ո՞ւմ միջնորդությամբ է Անդրանիկ Քոչարյանին «չնկարվող» համարներ տրամադրել: «Ժողովուրդ» օրաթերթը սա պարզելու համար գրավոր հարցում է ուղարկել Ոստիկանություն, որտեղից դեռ չեն պատասխանել մեր հարցմանը: Ոստիկանության պատասխանը ստանալուն պես այն կհրապարակենք, միայն հավելենք, որ որեւէ օրենքով նախատեսված չէ, որ պատգամավորը կարող է օպերատիվ համարանիշներ ունենալ. դա օրինախախտում է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ական պատգամավորներից էլի կան մի քանիսը, որոնք երթեւեկում են օպերատիվ համարանիշներով. նրանց կանդրադառնանք առաջիկայում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը պահանջել է «Մարտի 1»-ի գործը Հակակոռուպցիոն կոմիտեից վերցնել եւ դնել իր սեղանին, որպեսզի այսուհետ հենց ինքը զբաղվի այս գործով: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց մեկնաբանություն ստանալ այս առիթով Գլխավոր դատախազությունից, որտեղից, ի պատասխան մեր հարցադրմանը, գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը հայտնեց. «Մոտ տասն օր առաջ գլխավոր դատախազը գործը զեկուցելու հանձնարարական է տվել»: Նկատենք՝ մարտի մեկի ողբերգական իրադարձությունների 15-րդ տարին է լրանում այսօր: 2018 թվականի հեղափոխությունից հետո իշխանության եկած Նիկոլ Փաշինյանի տված՝ «Մարտի 1»-ը բացահայտելու խոստումը չի կատարվել, չնայած նա տարբեր առիթներով շարունակում է ասել, թե այն բացահայտված է համարում: 2018 թվականի օգոստոսի 17-ին հայտարարել էր. «Դուք բոլորդ լսել եք հատուկ քննչական ծառայության պետ Սասուն Խաչատրյանի հարցազրույցները: Մենք կարող ենք ասել, որ «Մարտի 1»-ի գործը, ըստ էության, ամբողջ ծավալով բացահայտված է»: Այս հայտարարությունից՝ գրեթե 5, եւ մարտի 1-ի դեպքերից 15 տարի անց «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մարտի 1-ի օրը զոհված Գոռ Քլոյանի հայրը՝ Սարգիս Քլոյանը, հայտնեց. «Մինչեւ հիմա «Մարտի 1»-ը բացահայտված չէ, բայց քանի որ ունենք նոր դատախազ, հույս ունեմ, որ կբացահայտվի»: Ստացվում է, որ զոհերի հարազատները Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանին արդեն չեն վստահում եւ հույսը դրել են նոր դատախազի վրա:

Yeremyan projects

«Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող օբյեկտները դարձել են պետական գերատեսչությունների սիրելի վայրերը: Բանն այն է, որ ներկայացուցչական ծախսեր, այսինքն՝ պատվիրակության համար ճաշը կամ ընթրիքը պետական գերատեսչություններից շատերը կազմակերպում են հենց այս ընկերության կողմից շահագործվող օբյեկտներում: Օրինակ՝ Պետական եկամուտների կոմիտեն այս ընկերության հետ պայմանագիր է կնքել 123 հազար դրամի չափով, որի շրջանակում պաշտոնական ճաշ է կազմակերպել 10 անձի համար: Մեկ անգամ էլ Պետական եկամուտների կոմիտեն կազմակերպել է Վրաստանի ֆինանսների նախարարության հետաքննության ծառայության ղեկավար Սոսո Ռամիշվիլիի գլխավորած պատվիրակության համար հյուրասիրություն՝ 125 հազար դրամի չափով: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այնտեղ կազմակերպվել է ՄԱԿ-ի թմրամիջոցների եւ հանցավորության դեմ պայքարի գրասենյակի տարածաշրջանային ծրագրի շրջանակներում աշխատաժողովի համար Հայաստան ժամանած անձանց պաշտոնական ճաշը: Այս պայմանագիրը կնքվել է փետրվարի 16-ին: Ազգային ժողովն էլ փետրվարի 9-ին 15 միլիոն դրամի մեկ անձից գնման ընթացակարգով պայմանագիր է կնքած եղել «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի հետ: Այդ գումարով նրանք մի քանի ռեստորաններում են հաշիվ փակած եղել, եւ այդ բոլոր ռեստորաններն էլ պատկանել են նույն ՍՊԸ-ին:

«ՊՈԿԵՐ ՖԵՅՍ»

ՔՐՈՆԻԿ ՍՈՒՏԱՍԱՆ Է

Հայաստանի հանրապետական կուսակցության փոխնախագահ Արմեն Աշոտյանը վերջերս իր ֆեյսբուքյան էջում փաստաթուղթ էր հրապարակել Մյունխենում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների բանակցությունների վերաբերյալ՝ վերնագրելով այն սկանդալային փաստաթուղթ:

Փաստաթուղթը կոչվում է «Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրի բանակցությունների մեկնարկ»:

Փաստաթուղթը ներառում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցվող Խաղաղության պայմանագրի հիմնական դրույթները: Ըստ Արմեն Աշոտյանի՝ այդ փաստաթուղթը եղել է նաեւ մյունխենյան հանդիպումների ու քննարկումների առարկան, եւ դրա շուրջ համաձայնություններ են ձեռք բերվել: Արմեն Աշոտյանը հավաստիացրել է՝ որոշ բառեր փաստաթղթում հնարավոր է ժամանակի ընթացքում փոփոխվեն, քանի որ այն վերջնական չէ, բայց սկզբունքներն արդեն համաձայնեցվել են Մյունխենում:

Փաստաթղթում նշվում է, որ փոխադարձ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչումը կլինի Հայաստան-Ադրբեջան խաղաղության համաձայնագրի մասը: Ըստ հրապարակված փաստաթղթի՝ խաղաղության համաձայնագիրը կպարունակի հոդված Ղարաբաղի հայերի անվտանգության եւ իրավունքների մասին, որը կհամապատասխանի Ադրբեջանի Սահմանադրությանն ու նրա միջազգային պարտավորություններին.

«Հայաստանը հրապարակավ կհայտարարի իր դիրքորոշումն առ այն, որ Ղարաբաղի հայերի անվտանգության եւ իրավունքների համապարփակ կարգավորումները պետք է հստակեցվեն մինչեւ Հայաստանի եւ Ադրբեջանի խաղաղության պայմանագրի բանակցությունների ավարտը»,-ասվում է փաստաթղթում:

Թե որտեղից այս փաստաթուղթը, եւ երբ է այն շրջանառվել, Արմեն Աշոտյանը մանրամասներ չի հայտնել:

Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանն էլ իր հերթին հայտարարել է, թե Արմեն Աշոտյանի հրապարակած փաստաթուղթն իրականությանը չի համապատասխանում. Հայաստանն այդ կետերի շուրջ չի բանակցում:

Արմեն Աշոտյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում, արձագանքելով Ախ քարտուղարի հերքմանը, հակադարձում է՝ իր հրապարակած փաստաթուղթն իրական է:

-Պարոն Աշոտյան, Արմեն Գրիգորյանը հայտարարել է, որ Ձեր հրապարակած փաստաթուղթն իրական չէ. ինչպե՞ս կհակադարձեք:

-Ախ քարտուղար կոչվածը հայտնի է իր քրոնիկ սուտասանությամբ: Կյանքը, ցավոք, ցույց է տվել, որ այն, ինչ հերքել են Նիկոլ Փաշինյանը եւ իր ծառայամիտ շրջապատը, իրականությանը համապատասխանում է: Մեզանից խնամքով երկար ժամանակ թաքցրել են թե՛ բանակցային, թե՛ ռազմական, թե՛ այլ կարեւորագույն դետալներ, որոնք հայ ժողովրդի մեջքի հետեւում դավերի տեսքով հյուսվել են՝ մեր ազգային շահերի հաշվին:

Արմեն Գրիգորյանի հերքումը գրոշի արժեք չունի. ես պնդել եմ, որ այդ սկզբունքներն իրական են, այդ առաջարկն իրական է եղել: Մնացած ամեն ինչը վատ խաղի ժամանակ լավ դեմք ընդունելու, այսպես ասած, «պոկեր ֆեյս» ընդունելու դատարկ ջանքեր են:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ

Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ԿԴԻՄԵՆ ՄԻԵԴ

ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկում է փոփոխություն կատարել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում: Մասնավորապես, կանոնակարգվելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խորհրդատվական կարծիքը ստանալու դրույթը:

Ըստ այդմ, առաջարկվում է ամրագրել, որ՝

- Սահմանադրական դատարանը կարող է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ սկզբունքային հարցերի վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով, եթե դա անհրաժեշտ է գործով որոշում կայացնելու համար:

Ընդ որում՝ խորհրդատվական կարծիք ստանալու առաջարկություն կարող է ներկայացնել յուրաքանչյուր դատավոր, ինչի վերաբերյալ Սահմանադրական դատարանը կայացնում է որոշում:

Հիմնավորման մեջ նշվում է, որ չնայած Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ օգտվում է ՄԻԵԴ դիմելու այդ հնարավորությունից, այնուամենայնիվ ներկայումս բացակայում են այդ մեխանիզմի կիրառման ներպետական հստակ ընթացակարգային կարգավորումները, ինչն անորոշություն է ստեղծում գործընթացի ճիշտ կազմակերպման տեսանկյունից:

Նախագծերով առաջարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում, ՀՀ վարչական դատավարության, ՀՀ քաղաքացիական դատավարության եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում կատարել համապատասխան լրացումներ՝նախատեսելով ՀՀ սահմանադրական դատարանի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից խորհրդատվական կարծիք ստանալու համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանին դիմելու ընթացակարգային կանոններ, այդ թվում՝ դատավորի կողմից խորհրդատվական կարծիք ստանալու առաջարկություն ներկայացնելու հնարավորության, խորհրդատվական կարծիք ստանալու խնդրանքին ներկայացվող պահանջների, փոխգործակցությունն ապահովող անձի վերաբերյալ կարգավորումներ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Երեկ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը ԱԺ-ում հանդիպել է ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթին այդ դռնփակ հանդիպումից մանրամասներ են հայտնի դարձել: Նախ նշենք, որ հանդիպումը տեւել է 2.5 ժամից ավելի: Մենք տեղեկացանք, որ պատգամավորների ու նախարարի միջեւ ակտիվ երկխոսություն է ծավալվել: Ինչպես նշել էինք, այդ հանդիպումը նախաձեռնվել էր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից, եւ խորհրդարան եկած նախարարին հարցեր են ուղղել նոր ստեղծված նախարարության աշխատանքի մասին եւս: Հետաքրքիր է, որ հարցուպատասխանի ժամանակ շատ են եղել հարցեր թմրամոլության դեմ պայքարի մասին:

Հավելենք, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը կրկին ակտիվացել եւ որոշել է պարբերաբար նման հավաքներ կազմակերպել խորհրդարանում՝ հրավիրելով գործադիրի ներկայացուցիչներին:

ՓԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Աշխարհի գրեթե բոլոր հեղինակավոր միջազգային քաղաքական եւ դատական ատյաններն արդեն հասցեական կոչեր են հղել Բաքվին՝ բացելու Արցախի կյանքի ճանապարհը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարից մինչեւ ԱՄՆ պետքարտուղար, Հաագայի միջազգային դատարանից մինչեւ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ մատնանշել են Ադրբեջանի թշնամական գործողությունն Արցախի հարյուր հազարավոր հայերի նկատմամբ եւ հորդորել ժամ առաջ բացել ճանապարհը:

Ի հեճուկս այդ կոչերի՝ Բաքուն շարունակում է փաստացի ցեղասպանական գործողությունն Արցախի հայության նկատմամբ: Այս մասին նշում է «Միացյալ Հայաստան» կուսակցության հիմնադիր-նախագահ Երվանդ Թարվերդյանը: «Չեմ դադարի կրկնելուց՝ խաղաղության պայմանագիր չի կարող կնքվել առանց Արցախի հայկական կարգավիճակի մասին հատուկ հիշատակման եւ անվտանգության միջազգային երաշխիքների սահմանման:

Հայաստանյան իշխանությունը պետք է բավարար դիվանագիտական ճկունություն ցուցաբերի՝ Արցախի կյանքի ճանապարհը բացելու բացառապես խաղաղ եղանակով, առանց որեւէ ներքին զիջման:

Իլհամ Ալիեւը չի կարող եւ իրավունք չունի Արցախում կադրային, պետական հարցեր լուծելու կամ որոշելու, թե իր հետ ով պիտի բանակցի: Հաագայի միջազգային դատարանի որոշումը նպատակային օգտագործելը կարող է դառնալ մեր հաղթաթուղթը Արցախն ապաշրջափակելու գործում», - նշում է նա:

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՍՏԱՆԱՆ

Ազգային անվտանգության մարմիններում ատեստավորման նոր համակարգ է ներդրվելու: ArmLur.am-ը ««Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ ««Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի հիմնավորումից տեղեկանում է, որ դրա արդյունքում առավել բարձր վարձատրություն է լինելու, ինչպես նաեւ ծառայողների մասնագիտական պատրաստվածության պատշաճ մակարդակ: Մասնավորապես, առաջարկվում է ներդնել Ազգային անվտանգության մարմիններում պետական սահմանի պահպանության, հետախուզական կամ հակահետախուզական կամ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման, հատուկ առաջադրանքների կատարման, պլանավորման եւ վերահսկման գործառույթներ իրականացնող ծառայողների համար ատեստավորման արդյունքում հաշվարկվող հավելավճար: Նշված պաշտոնները զբաղեցնող ծառայողներն ատեստավորմանն առաջին անգամ կմասնակցեն կամավորության սկզբունքով: Յուրաքանչյուր հաջորդ ատեստավորումը կիրականացվի երեք տարին մեկ անգամ:

ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ

«Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը նոր նախագիծ է ներկայացրել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ առաջարկվում է փոփոխություն կատարել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում:

Մասնավորապես, այդ օրենքի հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ երթուղու սպասարկումն իրականացնելու համար սահմանված փոխադրավարձը կարող է վերանայվել օբյեկտիվ պատճառներով (դրամի արժեզրկում կամ արժեւորում, վառելիքաքսուքային նյութերի, տրանսպորտային միջոցների եւ ավտոպահեստամասերի գների փոփոխություն եւ այլն)՝ մրցութային հանձնաժողովի ներկայացմամբ, եւ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմնի որոշմամբ, իսկ գնման գործընթացի միջոցով ընտրված օպերատորի կամ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում՝ ավագանու որոշմամբ:Օրենքի նախագծով առաջարկվում է վերանայել գործող կարգավորումը փոխադրավարձի բարձրացման վերաբերյալ: Այսպես, միասնական երթուղային ցանցերի առանձին երթուղիների ուղեգծերի եւ սխեմաների փոփոխության դեպքում վերանայել փոխադրավարձը կամ միասնական օպերատորի ընտրության մրցույթով չնախատեսված նոր երթուղիների ձեւավորման դեպքում սահմանել փոխադրավարձը, առանց մրցույթի: Բացի դա, սահմանվում է, որ միասնական երթուղային ցանցի առանձին երթուղիների ուղեգծերի եւ սխեմաների փոփոխության, միասնական երթուղային ցանցում նոր երթուղիների ձեւավորման դեպքում փոխադրավարձի սահմանման, ինչպես նաեւ գործող երթուղիների սպասարկումն իրականացնելու համար սահմանված փոխադրավարձի վերանայման պահանջները հաստատում է կառավարությունը:

ԼԱՉԻՆ

ԱՆՑԱԿԵՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը Բաքվում ադրբեջանցի գործընկեր Ջեյհուն Բայրամովի հետ համատեղ մամուլի ասուլիսում անդրադարձել է Լաչինի միջանցքի արգելափակմանը:

«Լաչինի միջանցքի ռեժիմը պետք է ամբողջապես համապատասխանի 2020 թվականի նոյեմբերի 9-ի ամենաառաջին եռակողմը հայտարարությանը, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է ազատ տեղաշարժ ապահովել բացառապես քաղաքացիական եւ մարդասիրական բեռների, քաղաքացիական անձանց համար: Խաղաղապահ զորակազմի գծով մեր շփումներում մենք փորձում ենք հասնել հենց դրան: Այնտեղ որեւէ հսկիչ անցակետի ստեղծում նախատեսված չէ, սակայն կա հնարավորություն տեխնիկական միջոցներով վերացնել առկա կասկածներն այն հարցում, որ միջանցքն իսկապես օգտագործվում է ըստ նշանակության: Մենք այսօր այդ մասին խոսել ենք, տեխնիկական դետալները երկրորդական նշանակություն ունեն»,- ասել է Լավրովը:

Խոսելով կարգավորման գործընթացում Ռուսաստանի միջնորդական դերի մասին՝ Լավրովն ասել է, որ Մոսկվան շարունակում է պատրաստ մնալ խաղաղության պայմանագրի քննարկման նպատակով ՀՀ եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպման կազմակերպման հարցում: Ըստ նրա՝ Բաքուն պատրաստ է, Երեւանն ասել է, որ եւս դեմ չէ, սակայն վերջնական համաձայնություն չի տալիս:

«Կարծում եմ՝ մենք, այսպես ասած, չափից շատ համառորեն չենք առաջարկելու մեր ծառայությունները, բայց դրանք երկու կողմին էլ շատ լավ հայտնի են»,- եզրափակել է Լավրովը:

Հիշեցնենք, որ անցած տարվա դեկտեմբերի 23-ին Մոսկվայում նախատեսված էր Հայաստանի, ՌԴ-ի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը, սակայն հայկական կողմը հայտնել էր հանդիպմանը չմասնակցելու որոշման մասին՝ պատճառաբանելով Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքի արգելափակումը: Սերգեյ Լավրովը նաեւ հայտարարել է, որ Եվրամիությունը բացահայտ չարաշահում է իր հարաբերությունները Հայաստանի եւ Ադրբեջանի հետ:

«Ինչ վերաբերում է Բրյուսելից հնչող հայտարարություններին, ապա մենք չենք կարող դրանք մանրամասն մեկնաբանել: Մենք տեսնում ենք՝ ինչպես է Եվրամիությունը բացահայտ չարաշահում իր հարաբերությունները Հայաստանի, Ադրբեջանի հետ, այդ թվում՝ Հայաստանի տարածքում առաջ մղելով լեգիտիմության տեսանկյունից լուրջ կասկածներ առաջացնող իր, այսպես կոչված, առաքելությունը, որն առաջացնում է բազում հարցեր, այդ թվում՝ իր գործառույթների, մանդատի, տեւողության, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ջանքերում այդ առաքելության ավելացված արժեքի տեսանկյունից: Այնուամենայնիվ, դա կողմերի ինքնիշխան ընտրությունն է՝ ում հետ համագործակցել, ում հետ՝ ոչ», - ասել է Լավրովը:

Նա հավելել է, որ Ռուսաստանն իր գործողություններում առաջնորդվում է հետեւյալ սկզբունքով՝ չվնասել եւ աջակցել այնպիսի լուծմանը, որը նախեւառաջ հիմնված կլիներ երեք ղեկավարների պայմանավորվածությունների վրա, եւ երկրորդ, որը կապահովեր այստեղ փոխշահավետ, փոխհարգալից համագործակցություն տարածաշրջանի բոլոր երկրների միջեւ: «Ոչ բոլոր խաղացողներն են (հատկապես նրանք, որոնք հեռու են գտնվում Հարավային Կովկասից) առաջնորդվում այսպիսի սկզբունքներով: Նրանք ցանկանում են այստեղ աշխատել ոչ թե հանուն ինչ-որ բանի, այլ ինչ-որ մեկի դեմ: Մենք դա տեսնում ենք եւ վստահ ենք, որ դա տեսնում են նաեւ ուղղակիորեն գործընթացում ներգրավված կողմերը», - ասել է Լավրովը: Միեւնույն ժամանակ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը ադրբեջանցի իր գործընկեր Ջեյհուն Բայրամովին հրավիրել է այցելելու Ռուսաստան: «Մենք մշտական շփումների մեջ ենք ադրբեջանցի իմ գործընկեր Ջեյհուն Բայրամովի հետ: Օգտվելով առիթից՝ ադրբեջանցի իմ գործընկերոջը հրավիրում եմ այցելելու Ռուսաստան», - ասել է Լավրովը Բաքվում կայացած համատեղ ասուլիսում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՌԱՆՁՆԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Հանրապետության զորամասերից մեկը կատարած այցի ընթացքում պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն առանձնազրույցներ է ունեցել սպաների հետ:

Սուրեն Պապիկյանը լսել է զորամասի վարչակազմի, ստորաբաժանումների սպաներին հուզող հարցերը, ներկայացրել ԶՈՒ բարեփոխումների փաթեթը:

Պաշտպանական գերատեսչության ղեկավարը հետաքրքրվել է զորքերի մարտական ծառայությամբ, մարտավարամասնագիտական պատրաստությամբ, տեսական ու գործնական հմտություններով:

Զրույցների ընթացքում Սուրեն Պապիկյանը ծանոթացել է նաեւ սպաների սոցիալ-կենցաղային պայմաններին, վստահություն հայտնել, որ մեկնարկող ատեստավորման փուլի բարեհաջող հաղթահարումը հնարավորություն կտա էականորեն բարձրացնել սպայական, ենթասպայական եւ պայմանագրային կազմերի աշխատավարձերը:

ՀԱՅ-ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է Լյուքսեմբուրգի Պատգամավորների պալատի բյուրոյի փոխնախագահ, խորհրդարանի փոխխոսնակ Ջունա Բերնարդի գլխավորած պատվիրակությանը:

Ա. Գրիգորյանը նշել է, որ Հայաստանը կարեւորում է Լյուքսեմբուրգի հետ բազմաոլորտ փոխգործակցության զարգացումը, եւ վստահություն հայտնել, որ երկկողմ հայ-լյուքսեմբուրգյան հարաբերությունները կշարունակեն ամրապնդվել:

Ջ. Բերնարդին ընդգծել է Լյուքսեմբուրգի պատրաստակամությունը նպաստելու տարածաշրջանում խաղաղության հաստատմանը եւ հիշատակել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի կողմից ընդունված որոշումը՝ պարտավորեցնելու Ադրբեջանին ապահովել տրանսպորտի եւ մարդկանց անխափան տեղաշարժը Լաչինի միջանցքով:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները նաեւ անդրադարձ են կատարել տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին, Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության գործունեությանը:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐՆ Է ՀԱՆՁՆԵԼ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-վրացական բազմաշերտ համագործակցության ոլորտների վերաբերյալ օրակարգային հարցեր, Հայաստանի եւ Վրաստանի գործարար շրջանակների միջեւ փոխգործակցության խթանման ուղղությունները:

Անդրադարձ է կատարվել նաեւ տարածաշրջանային հիմնախնդիրներին եւ դրանց լուծման հեռանկարներին: Երկուստեք շեշտվել է Հարավային Կովկասում կայուն եւ հարատեւ խաղաղության հաստատման անհրաժեշտությունը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԵՂԾ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը շարունակում է հարկային իրավախախտումների եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարը՝ հսկողություն իրականացնելով գործունեության բոլոր ոլորտների նկատմամբ:

Ազգային անվտանգության ծառայությունից Պետական եկամուտների կոմիտե օպերատիվ տվյալներ էին ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքում կազմակերպվում է կեղծ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված կեղծ օղիների եւ կոնյակների արտադրություն, եւ այդ ալկոհոլային խմիչքներն իրացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում: Ստացված տվյալներն իրացնելու նպատակով Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից մշակվել ու ձեռնարկվել են համալիր, լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Արդյունքում պարզվել է հնարավոր կեղծ ալկոհոլային խմիչքների արտադրամասի ստույգ գտնվելու վայրը, որից հետո տվյալ տարածքը վարչության աշխատակիցները վերցրել են օպերատիվ հսկողության տակ:

Միջոցառումների ընթացքում վարչության աշխատակիցները, գնահատելով իրավիճակը, մտացածին եւ ճշմարտանման տեղեկությունների օգտագործման միջոցով հանկարծակի եղանակով մուտք են գործել տարածք, որի արդյունքում շինության նկուղային հարկում հայտնաբերվել է ալկոհոլային խմիչքների քողարկված արտադրամաս, որտեղ այդ պահին աշխատել է 6 աշխատակից:

Պարզվել է, որ գործունեությունը կազմակերպած անհատ ձեռնարկատերն առանց ծանուցման իրականացրել է ծանուցման ենթակա գործունեություն՝ զբաղվել է ալկոհոլային խմիչքների արտադրությամբ, ինչպես նաեւ հիշյալ գործունեությունը կազմակերպելու համար եւ իրացման նպատակով ձեռք բերել, պահել եւ օգտագործել է Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության կեղծ ակցիզային դրոշմանիշեր: ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում նույն օրը ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու, միաժամանակ իրացման նպատակով կեղծ ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու կամ օգտագործելու համար, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության շրջանակում քննիչի կայացրած որոշման համաձայն՝ ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության եւ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության աշխատակիցների մասնակցությամբ կատարվել է դեպքի վայրի սկզբնական զննություն:

Հայտնաբերված կոնյակի եւ օղու պատրաստման ու իրացման համար նախատեսված պարագաներն առգրավվել են: Հայտնաբերվել են կեղծ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված եւ պիտակավորված տարբեր անվանումներով 446 շիշ կոնյակ եւ 4949 շիշ օղի, պոլիէթիլենային տակառներով 200-250 լիտր տարողությամբ 13 հատ էթիլ սպիրտ, պոլիէթիլենային տարաներով 10 հատ 20 լիտր տարողությամբ կոնյակ, տարբեր ապրանքանիշի պիտակներ, խցաններ, շշեր, ինչպես նաեւ ալկոհոլային խմիչքներ արտադրելու եւ շշալցնելու համար անհրաժեշտ սարքավորումներ: Միջոցառումներ են ձեռնարկվում պետությանը պատճառված վնասի վերջնական չափը հստակեցնելու համար: Նախնական տվյալներով՝ պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 15 մլն ՀՀ դրամի վնաս: Միաժամանակ, անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու նպատակով այժմ տարվում են համապատասխան աշխատանքներ:

Հնարավոր տուգանքի չափը կկազմի 165 մլն ՀՀ դրամ:

ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը հետեւողական է լինելու նման արատավոր երեւույթներն, այդ թվում՝ ակցիզային դրոշմանիշների կիրառման օրինականությունը պարզելու հարցում՝ հիշեցնելով, որ օրինախախտները կենթարկվեն պատասխանատվության օրենքի ողջ խստությամբ:

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է

ԳՐՊԱՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ՝ ԱՎՏՈԲՈՒՍՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են 2023թ. փետրվարի 19-ին երթուղային ավտոբուսում կատարված գողության դեպքի հանգամանքները: ՔԿ-ից հայտնում են, որ 2023թ. փետրվարի 19-ին Երեւանի բնակչուհին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 13:50-ի սահմաններում, Երեւան քաղաքի Օղերայի տարածքից նստել է երթուղային ավտոբուս եւ իջել է «Դալմա» առեւտրի կենտրոնի մոտ, որից հետո նկատել է, որ իր ձեռքի պայուսակից բացակայում է դրամապանակը, որի մեջ եղել է 70.000 ՀՀ դրամ գումար, նույնականացման քարտը եւ բանկային քարտ:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում իրականացված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձանց ինքնությունը, որոնք Երեւան քաղաքի բնակիչներ են՝ ծնված 1990թ.:

Քննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2023 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 13:50-ի սահմաններում, Երեւան քաղաքի վերոնշյալ բնակիչները, խմբի կազմում հափշտակություն կատարելու նախնական համաձայնությամբ, երթուղային ավտոբուսի սրահում գտնվող քաղաքացու ձեռքի պայուսակից հափշտակել են վերջինիս պատկանող դրամապանակը, որի մեջ եղել է շուրջ 75.000 ՀՀ դրամ գումար, բանկային քարտ եւ նույնականացման քարտ, որից հետո՝ ժամը 14:11-ին, Երեւան քաղաքի Կիեւյան փողոցում գտնվող բանկոմատից կատարել են 20.000 ՀՀ դրամի կանխիկացում՝ քաղաքացուն պատճառելով շուրջ 95.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

ՀՀ ոստիկանության ՆԳՆ պարեկային ծառայողների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք հայտնաբերվել են եւ ձերբակալվել՝ հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով: Նրանց անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է հափշտակված գումարը:

Վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած միջնորդության բավարարման արդյունքում հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել նշված երկու անձանց նկատմամբ, եւ 32-ամյա տղամարդկանցից մեկին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, իսկ մյուսին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով:

Միջնորդություն է ներկայացվել դատարան երկու մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու նպատակով: Դատարանը բավարարել է նրանցից մեկի վերաբերյալ միջնորդությունը, սակայն մերժել է մյուսի վերաբերյալ միջնորդությունը: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՍՏԱՆԱՆ

Ազգային անվտանգության մարմինների ծառայողները ատեստավորում կանցնեն ու հավելավճար կստանան:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում ներկայացրեց ԱԱԾ տնօրենի տեղակալ Անդրանիկ Սիմոնյանը:

Նախագծի նպատակը ազգային անվտանգության մարմիններում ատեստավորման նոր համակարգի ներդրումն է, դրա արդյունքում առավել բարձր վարձատրության նախատեսումը, ինչպես նաեւ ծառայողների մասնագիտական պատրաստության պատշաճ մակարդակի ապահովումը:

ԱԱԾ տնօրենի տեղակալի հավաստմամբ՝ նախագծով մասնավորապես առաջարկվում է ազգային անվտանգության մարմիններում պետական սահմանի պահպանության, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ հետախուզական գործունեության իրականացման, հատուկ առաջադրանքների կատարման, պլանավորման եւ վերահսկման գործառույթներ իրականացնող ծառայողների համար ատեստավորման արդյունքում հաշվարկել հավելավճար: Այդ պաշտոնները զբաղեցնող ծառայողներն ատեստավորմանն առաջին անգամ կմասնակցեն կամավորության սկզբունքով: Յուրաքանչյուր հաջորդ ատեստավորումը կիրականացվի 3 տարին մեկ անգամ:

Ատեստավորման բացասական արդյունքի դեպքում ծառայողը կրկին ատեստավորում անցնելու համար մեկ տարվա ընթացքում 2 անգամ դիմելու հնարավորություն կունենա: Ատեստավորման ընթացակարգը, հաշվարկվող հավելավճարի չափերն ու վճարման կարգը սահմանվելու է կառավարության որոշմամբ, իսկ ատեստավորման ենթակա ծառայողների պաշտոնների շրջանակը՝ ԱԱԾ տնօրենի հրամանով:

Նախատեսվում է, որ ատեստավորման արդյունքում հավելավճար հաշվարկելու դեպքում չեն վճարվելու օրենքով սահմանված մյուս հավելումները:

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Փետրվարի 28-ին՝ ժամը 07:20-ին, ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Ստամբուլ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո օդանավակայանում հայտնաբերվել, ձերբակալվել եւ գծային բաժին է տարվել ՌԴ քաղաքացի, 31-ամյա Նիկիտա Կ.-ն:

Նա 2022 թ. դեկտեմբերի 20-ից Մոսկվա քաղաքի իրավապահ մարմինների կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի (Վանդալիզմը) մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ ստորագրություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՌԵԼԱՓԱՅՏԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

Կառավարության որոշմամբ՝ ամեն տարի Տավուշի մարզի անտառամերձ բնակավայրերում ապրող ընտանիքներին անվճար մինչեւ 8 խորանարդ մետր ծավալով թափուկ վառելափայտ է տրվում, որը այդ ընտանիքները հայթայթում են ինքնապատրաստմամբ անտառում քամուց, կայծակի հարվածից ընկած ծառերից, նախկինում հատված ծառերի մնացորդներից, փտած ծառերից եւ այլն: Այդ թափուկ վառելափայտի պատրաստումը հաճախ կարիքավոր ընտանիքների համար մեծ դժվարություններ է առաջացնում, քանի որ թափուկ վառելափայտը անտառտնտեսությունները տրամադրում են բնակավայրերից հեռու, դժվարամատչելի վայրերում, խոր ձորերում, որտեղից թափուկի հանումը, տեղափոխումը մեծ հոգս ու վառելիքի հավելյալ ծախս է: Չնայած այդ դժվարություններին՝ հազարավոր ընտանիքներ օգտվում են թափուկ վառելափայտի տրամադրման ծրագրից: Տավուշի մարզի անտառամերձ գյուղերի բազմաթիվ բնակիչներ դժգոհություն են հայտնել, որ այս տարի իրենց չի տրամադրվելու թափուկ վառելափայտ: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը հայտնել է, որ թափուկ վառելափայտի տրամադրումը դադարեցվել է, որովհետեւ գարնանային ստուգումների արդյունքում Տավուշի մարզի անտառային տնտեսությունների ենթակայության տակ գտնվող անտառներում հայտնաբերվել են մեծ թվով ապօրինի անտառահատումներ: Այդ խնդրի կապակցությամբ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն է դիմել ԱԺ« Հայաստան» խմբակցության պատգամավոր, Իջեւան քաղաքի բնակիչ Գառնիկ Դանիելյանը, ում հարցմանն ի պատասխան՝ այդ նախարարությունից հայտնել են, որ մշակվում է թափուկ վառելափայտի տրամադրման հստակ կանոնակարգ, այդ մասին թափուկ վառելափայտի տրամադրման համար դիմած քաղաքացիները կտեղեկացվեն 15 օրվա ընթացքում: Շրջակա միջավայրի նախարարության այդ պատճառաբանումը անտրամաբանական է, քանզի ապօրինի անտառահատումների հանդեպ վերահսկողությունը եւ դրանք կանխարգելելը հենց այդ նախարարության կարեւոր գործառույթն է, նախարարության թերացման պատճառով բազմաթիվ ընտանիքներ ձմռան վերջին մնացել են առանց թափուկ վառելափայտի: Իջեւան ու Բերդ համայնքների անտառները տնօրինող Իջեւանի, Սեւքարի ու Արծվաբերդի անտառտնտեսություններում կատարված ստուգումների հետեւանքով բացահայտվել են ապօրինի անտառահատման բազում դեպքեր, որոնք անտառների ոչ բավարար պահպանության հետեւանք են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ

ՈՐՈՇԱԿԻ ԴՐԱՄԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ

ՀՀ ազգային ժողովը քննարկեց կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը, որով առաջարկվում է հնարավորություն տալ այն զինծառայողներին, որոնց հաշմանդամության խումբը վերափորձաքննության արդյունքում 2-րդից ճանաչվել է 3-րդ, Զինծառայողների աղահովագրության հիմնադրամից որոշակի դրամային աջակցություն ստանալու:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն ԱԺ նիստում ներկայացրեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Դավիթ Խաչատրյանը:

Փոխնախարարը ներկայացրեց, որ, գործող օրենքի համաձայն, հիմնադրամի շահառու կարող է լինել զինծառայողը, որը մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետեւանքով ստացել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն: Եթե զինծառայողը վերափորձաքննության արդյունքում ճանաչվում է 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա, ըստ գործող կարգավորումների, ամսական հավասար վճարումները դադարեցվում են: Այս իրավիճակում է հայտնվել 114 շահառու, ում հաշմանդամության 2-րդ խումբը վերափորձաքննության արդյունքում փոխվել է 3-րդի, ինչն էլ նրանց դժգոհությունն է հարուցել:

«Վերափորձաքննության արդյունքում 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելուց հետո պետությունից վճարվող կենսաթոշակն ու պարգեւավճարը միասին կազմում են սպայի դեպքում 74 հազար դրամ (հիմնադրամից նրանք ստանում են 200 հազար դրամ), իսկ պայմանագրային եւ զորահավաքային զինծառայողի, կամավորի դեպքում՝ 66 հազար դրամ (հիմնադրամից ստանում էին 150 հազար դրամ հատուցում), իսկ պարտադիր ժամկետայինի դեպքում՝ 66 հազար՝ 100 հազար դրամի փոխարեն»,- ներկայացրեց Խաչատրյանը:

Միաժամանակ օրենքի դրույթները սահմանափակում են հիմնադրամի հնարավորությունները, քանի որ հիմնադրամի խորհուրդը կարող է որոշում կայացնել միայն մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ը տեղի ունեցած դեպքերի հատուցման եղանակների եւ ժամկետների վերաբերյալ: Ըստ այդմ՝ հիմնադրամը չի կարողանում իր առաքելությանը համահունչ որոշակի լրացուցիչ աջակցության ծրագրեր իրականացնել հիմնադրամի շահառուների համար:

«Նախագծով առաջարկվում է հիմնադրամի խորհրդին լիազորել իր սահմանած պայմաններում եւ կարգով լրացուցիչ սոցիալական ծառայություններ մատուցել հիմնադրամի շահառուներին, անցումային շրջանի համար՝ մինչեւ անձի ֆունկցիոնալության գնահատման մասին օրենքի ամբողջական կիրարկումը, դրամական աջակցություն վճարել այն զինծառայողների համար, որոնք ունեցել ենք 1-ին կամ 2-րդ խմբի կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամություն, այսինքն՝ եղել են հիմնադրամի շահառու եւ վերափորձաքննության արդյունքում ճանաչվել են 3-րդ խմբի կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամություն ունեցող անձ»,- ասաց փոխնախարարը:

Դրամական աջակցության չափն առաջարկվում է՝ սպայական կազմի զինծառայողներին՝ 75 հազար դրամ, պայմանագրային եւ զորահավաքային կազմի զինծառայողներին եւ կամավորներին՝ 50 հազար դրամ, պարտադիր ժամկետային կազմի զինծառայողներին՝ 25 հազար դրամ: Այս չափերը սահմանվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ անձինք ստանալու են նաեւ հաշմանդամության զինվորական կենսաթոշակն եւ համապատասխան պարգեւավճար:

Նախարարության տվյալներով՝ 2022-ի օգոստոսի 29-ի դրությամբ 44-օրյա պատերազմի հետեւանքով 3-րդ խմբի հաշմանդամություն է սահմանվել 114 անձի, որոնք նախկինում հանդիսացել են 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող եւ, հետեւաբար, հիմնադրամի շահառու: Ըստ նախարարության կանխատեսման՝ նման իրավիճակում կարող է հայտնվել ընդհանուր առմամբ շուրջ 160 շահառու:

Սպայական կազմի զինծառայողները պետությունից ստանում են 36 հազար դրամ պարգեւավճար, իսկ զինվորական միջին կենսաթոշակը կազմում է 38 հազար դրամ, արդյունքում հիմնադրամի առաջարկվող հատուցման հետ միասին նրանք կստանան շուրջ 150 հազար դրամ՝ 2-րդ խմբի հատուցման 200 հազար դրամի դիմաց: Պայմանագրային, ենթասպայական եւ շարքային կազմերի կամավորագրվածները պետությունից ստանում են 36 հազար դրամ պարգեւավճար եւ միջինում 30 հազար դրամ զինվորական կենսաթոշակ, հատուցման առաջարկվող 50 հազար դրամ կենսաթոշակի հետ միասին կստանան 116 հազար՝ 150 հազար դրամի փոխարեն: Պարտադիր ժամկետային զինծառայողները ստանում են 30 հազար կենսաթոշակ, 36 հազար դրամ պարգեւավճար, առաջարկվող 25 հազար լրացուցիչ հատուցման հետ միասին կստանան 91 հազար՝ 100 հազար դրամի փոխարեն:

ԲԱՆԱԿԻՑ ԱՋԱՏՈՂԸ

ԹԱՆԴԻԼՅԱՆԸ ՈՒԶՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՊԵՏ ԴԱՌՆԱԼ

Մենք տեղեկություններ ենք ստանում, որ «Առրելու երկիր» կուսակցության ավագանու ցուցակը գլխավորելու է Մանե Թանդիլյանը. վերջինս արդեն սկսել է ձեւավորել քարոզչական թիմ ու նախապատրաստվել գալիք ընտրություններին:

Իհարե, ցանկացած քաղաքական ուժ իրավունք ունի զբաղվելու սեփական քարոզչության կազմակերպմամբ, սակայն առնվազն տարօրինակ է, որ Արցախում մնալու, Արցախը շենացնելու խոստումներ տված Ռուբեն Վարդանյանի քաղաքական թիմի առաջին շարքերում են մարդիկ, որոնք իրենց անցյալով ու ներկայով, մեղմ ասած, չեն համապատասխանում այդ սկզբունքներին: Վառ օրինակ է Մանե Թանդիլյանը. վերջինս ոչ վաղ անցյալում զբաղեցնում էր Արցախի սոցապահովության նախարարի պաշտոնը ու չէր դադարում Արցախ գնալու կոչեր անել, սակայն ինչպես պարզել էին մեր աղբյուրները, նա նույնիսկ իր որդիներին է Հայաստանից դուրս տարել, էլ չենք խոսում իր ու ընտանիքի՝ Արցախ տեղափոխվելու մասին: Մեր աղբյուրները պնդում են, որ Թանդիլյանի այդ քայլը կապված է որդիներին բանակից ազատելու ցանկության հետ, ինչը թերեւս ստացվել է: Ալավերդու տարածաշրջանում ծնված Մանե Թանդիլյանը Երեւանի քաղաքապետ է ուզում դառնալ՝ չցանկանալով սեփական երեխաներին հայոց բանակ զորակոչել, կասկածի տակ դնելով թե՛ իր, թե՛ իր կուսակցության լիդերի խոստումների անկեղծությունն ու հիմնավոր լինելը: Մեր օրերում ընդունված է հայրենասիրություն դրեւորել Արցախի շուրջ՝ բոցաշունչ խոսքեր, ֆեյսբուքյան կոչեր, սակայն, ինչպես հաճախ պատահում է, ուսումնասիրելով հայտարարություններ անողների անցյալը՝ բախվում ենք շարքային պոպուլիզմի հետ: Ի դեպ, մենք տեղեկացանք, որ Ռուբեն Վարդանյանի մեկ այլ ակտիվ թիմակից, այդ քաղաքական ուժի PR-ով զբաղվող նախկին նախարար Մեսրոպ Առաքելյանը եւս չի ծառայել ՀՀ զինված ուժերում, ինչը նրան չի խանգարում շատ հայրենանվեր ու ամեն բանով երկրին ծառայելու մասին ստատուսներ գրել: Ակնալում ենք, որպեսզի ՀՀ գլխավոր դատախազությունն ու ՊՆ-ն հետամուտ կլինեն հատկապես հայ քաղաքական գործիչների որդիների՝ բանակ զորակոչվելու ու զինապարտության հարցերին: Հայրենիքի պաշտպանությանը պետք է մասնակցեն բոլորի զավակները, իսկ քաղաքացիներն իրավունք ունեն տեղյակ լինել իրենց ծառայելու խոստումներ տվողների կյանքի որոշ մանրամասներին, որտեղից կարելի է հասկանալ՝ արդյոք այդ մարդիկ պատրաստ են երկրին տալ ամեն ինչ, թե շարքային պոպուլիստներ են:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 3 ՃՏՊ. 6 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 2022 թվականին հինգ առանցքային շուկաների շարքում ուսումնասիրել է նաեւ էլեկտրոնային առեւտրի ոլորտը մրցակցության վրա վերջինիս ազդեցությունը դիտարկելու նպատակով: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել նաեւ այն հարցին, թե էլեկտրոնային առեւտրի զարգացումը ինչպես է ազդում ՀՀ-ում մանրածախ առեւտրով զբաղվող խանութ-սրահների գործունեության վրա:

Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝

-Էլեկտրոնային առեւտուրը տարբեր շուկաների մրցակցության վրա ունեցել է էական ազդեցություն, անգամ կենտրոնացված շուկաներում այն խթան է հանդիսացել մրցակցություն ապահովելու համար:

-ՀՀ տարածքում էլեկտրոնային առեւտրի ծավալները տարեցտարի աճում են: 2021 թվականին էլ. առեւտրի շրջանառության ծավալը կազմել է 506,5 միլիոն դոլար (2017 թվականի համեմատ աճը կազմել է 145 տոկոս):

-Զարգացման խթաններից է հանդիսացել առանց մաքսազերծման առեւտրի շեմի բարձրացումը, որոշ չափով ազդեցություն է ունեցել նաեւ COVID-19 համավարակը:

-Էլեկտրոնային առեւտրի միջոցով ՀՀ ներմուծվող ապրանքատեսակների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն հագուստը եւ աուդիո-վիդեո եւ այլ չափսերով ու քաշով փոքր տեխնիկաները:

-ՀՀ օրենսդրությամբ առկա չեն էլեկտրոնային առեւտրի ոլորտի վերաբերյալ ամբողջական կարգավորումներ, ինչը հնարավորություն չի տալիս համապարփակ կերպով վերահսկել եւ կարգավորել ոլորտը:

Այսուհետ՝ ինքնուրույն

«ՀՀ արտաքին առեւտրի ազգային մեկ պատուհան» միասնական հարթակում (trade.gov.am) ներդրված «Թույլատվական փաստաթղթեր» (sw.gov.am) համակարգում սույն թվականի մարտի 1-ից կգործարկվի Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ենթահամակարգը, ինչի արդյունքում տեսչական մարմնի կողմից ներկայումս կիրառվող էլեկտրոնային համակարգին օգտվողների հասանելիությունը կսահմանափակվի միայն դիտելու հնարավորությամբ: Տեսչական մարմնի կողմից տրամադրվող համապատասխան թույլատվական փաստաթղթեր ստանալու նպատակով անհրաժեշտ է լինելու հայտերը ներկայացնել վերոնշյալ «Թույլատվական փաստաթղթեր» (sw.gov.am) էլեկտրոնային համակարգի միջոցով:

Իրավաբանական անձինք՝ սույն թվականի մարտի 1-ից, իսկ ֆիզիկական անձինք սույն թվականի մայիսի 1-ից թույլատվական փաստաթուղթ ստանալու նպատակով ներկայացվող հայտերը «Թույլատվական փաստաթղթեր» (sw.gov.am) համակարգի միջոցով լրացնելու են ինքնուրույն (նախկինում դրանք անձանց փոխարեն լրացվել են տեսչական մարմնի աշխատակիցների կողմից):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Սերոբ Մնացականյանին պատկանող «ՄՏՋ-82» տրակտորի՝ 28-94 SL պետհամարանիշը՝ տրված 001162-ի կողմից, 2020թ.-ի ապրիլի 14-ին:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԾՐԱԳՐՈՒՄ

ԲՆԱԿԱՐԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Արցախի Հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի պայմաններում փոփոխություններ են իրականացվել:

Ըստ այդմ՝ ծրագրին առցանց դիմելու ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2023 թվականի մարտի 15-ը, հիփոթեքային վարկի ձեւակերպման ժամանակ որպես վարկառու կամ համավարկառու կարող է հանդես գալ ընտանիքի ցանկացած անդամ՝ անկախ հավաստագրում ներառված լինելու հանգամանքից: Ծրագրի շահառուներն աջակցություն կստանան ոչ միայն բնակելի անշարժ գույք, անհատական բնակելի տուն, այլ նաեւ կառուցվող բազմաբնակարան շենքից բնակարան գնելու իրավունք ձեռք բերելու դեպքում: Կառուցապատումը շարունակելու նպատակով, հավաստագրի հիման վրա, կտրամադրվի կառուցապատման վարկ. ընտանիքի անդամից նվիրատվությամբ կամ ժառանգությամբ ստացած հողի վրա շահառուն կարող է կառուցել անհատական բնակելի տուն: Ծրագրով նախատեսված աջակցության չափից ավելի ցածր արժեքով գույք ձեռք բերող շահառուները կարող են աջակցության գումարի մնացորդն ուղղել տվյալ բնակելի անշարժ գույքի վերանորոգմանը: Վերջին 12 ամիսների ընթացքում գույքի օտարված չլինելու վերաբերյալ պայմանը չի տարածվում նվիրատվության եղանակով օտարված գույքի վրա:

Ծրագրի շրջանակում այս պահի դրությամբ հավաստագիր է ստացել 3423 շահառու, որից շուրջ 300 շահառու ձեռք է բերել անշարժ գույք, կամ հիփոթեքային վարկավորման գործընթացը գտնվում է ավարտական փուլում:

Այսպիսով, իրականացված այս եւ նախորդ փոփոխությունների արդյունքում ծրագրի չափորոշիչներին համապատասխանող քաղաքացիները կարող են ոչ միայն ձեռք բերել, կառուցել եւ վերակառուցել իրենց սեփական տունը, այլեւ բարեկարգել այն: Ծրագրի շրջանակում կսուբսիդավորվի նաեւ ձեռք բերվող կամ կառուցվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման համար գանձված գումարը:

Միասնական սոցիալական ծառայության հետ համագործակցող բանկից կամ վարկային կազմակերպությունից հիփոթեքային վարկ ստանալու դեպքում պետությունը հավաստագրի միջոցով կիրականացնի վարկային ժամանակացույցին համապատասխան մայր գումար եւ տոկոսագումարի սուբսիդավորում, մասնավորապես՝ Երեւանում ամսական վճարների մարման համար հանրագումարային մինչեւ 8 մլն դրամ մայր գումարի եւ դրա նկատմամբ հաշվեգրվող մինչեւ 8% տոկոսագումարի գծով, ՀՀ մարզային բնակավայրերում ամսական վճարների մարման համար հանրագումարային մինչեւ 10 մլն դրամ մայր գումարի եւ դրա նկատմամբ հաշվեգրվող մինչեւ 10% տոկոսագումարի գծով, Արցախի Հանրապետությունում ամսական վճարների մարման համար հանրագումարային մինչեւ 12 մլն դրամ մայր գումարի եւ դրա նկատմամբ հաշվեգրվող մինչեւ 12% տոկոսագումարի գծով, սահմանամերձ բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում հիփոթեքային վարկի ամսական վճարների մարման համար հանրագումարային մինչեւ 14 մլն դրամ մայր գումարի եւ դրա նկատմամբ հաշվեգրվող մինչեւ 13% տոկոսագումարի գծով, սահմանամերձ բնակավայրում անհատական բնակելի տուն կառուցելու, ինչպես նաեւ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բազմաբնակարան բնակելի շենքում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու դեպքում հիփոթեքային վարկի ամսական վճարների մարման համար հանրագումարային մինչեւ 16 մլն դրամ մայր գումարի եւ դրա նկատմամբ հաշվեգրվող մինչեւ 13% տոկոսագումարի գծով:

Հիշեցնենք, որ միջոցառման շահառուներն Արցախի Հանրապետության առանձին շրջաններում 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ բնակված կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված, առնվազն վերջին երեք ամիսներին փաստացի բնակված կամ վերջին երեք տարում փաստացի բնակված եւ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետեւանքով տեղահանված ընտանիքներն են (այդ թվում՝ մեկ անձից բաղկացած), այդ թվում՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո տվյալ ընտանիքում ծնված երեխան, բացառությամբ այն ընտանիքների, որոնք որեւէ ծրագրի շրջանակում գործողվել են Արցախի Հանրապետություն մինչեւ 2020 թվականի սեպտեմբերի 27-ը եւ վերջին երեք ամիսներին բնակվել են այնտեղ:

ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Չինաստանը Հայաստանին անհատույց օգնություն կտրամադրի 100 մլն յուանի (ավելի քան 14,5 մլն դոլար) չափով:

Այս մասին հունվարի 28-ին՝ Ազգային ժողովի նիստում «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջեւ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրի վավերացման հարցի քննարկման ժամանակ, հայտարարեց ՀՀ փոխարտգործնախարար Մնացական Սաֆարյանը:

Օգնությունը, նրա խոսքով, կտրամադրվի վերոնշյալ համաձայնագրի վավերացումից հետո: «Միջոցները կուղղվեն Հայաստանի Հանրային հեռուստաընկերության հեռարձակման սրահի նախագծմանը եւ կառուցմանը եւ այլ համատեղ նախագծերի իրականացմանը»,- հստակեցրեց Սաֆարյանը:

Նա նաեւ նշեց, որ Երեւանի եւ Պեկինի միջեւ ձեւավորվել է քաղաքական երկխոսության բարձր մակարդակ:

Ստորագրվել են ավելի քան 50 համաձայնագրեր եւ հուշագրեր, անցկացվում են քաղաքական խորհրդակցություններ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱՆԱՁԵՒԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ՝ ԼԱՏՎԻԱՅՈՒՄ

Գիտնական Դենիել Ֆիտանտեն, որը զբաղվում է սփյուռքի, միջազգային միգրացիայի, հետխորհրդային քաղաքական անցումային ժամանակաշրջանի, քաղաքային սոցիոլոգիայի ուսումնասիրություններով, լայնածավալ գիտական հոդված է հրատարակել միջազգային հարաբերություններին առնչվող առաջատար Chatham House-ի ամսագրում՝ վերլուծելով 2021 թ.-ին Լատվիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

«Կառուցողական հիշողության քաղաքականությունը. Հայոց ցեղասպանության ճանաչումը Լատվիայում» խորագրով հոդվածում հեղինակն անդրադառնում է այն գործընթացներին, որոնք, ի վերջո, հանգեցրել են Լատվիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձեւի ընդունմանը:

Հեղինակը նշում է, որ 2018 թ.-ին Լատվիայում անցկացված խորհրդարանական ընտրություններից հետո Սեյմում հայտնվեցին ակտիվիստներ, գիտնականներ եւ լրագրողներ, որոնք մարդու իրավունքների կողմնորոշում ունեցող օրենսդրության կողմնակից էին: Հենց Լատվիայի 13-րդ գումարման խորհրդարանում ընդունվեց հայտարարություն, որով ճանաչվում էր Ղրիմի թաթարների ցեղասպանությունը (2019), բանաձեւ ընդունվեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին (2021), օրինագիծ՝ Հոլոքոստի ճանաչման մասին (2022) եւ այլ օրինագծեր:

Հեղինակը, սակայն, նշում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձեւում հիմնական շարժիչ ուժը եղել է «դրսից»՝ ի դեմս Բալթյան երկրներում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանի:

«Չնայած Մկրտչյանը (խմբ.՝ ցեղասպանության ճանաչմանն ուղղված) ջանքեր էր գործադրում իր պաշտոնավարման հենց սկզբից՝ 2016 թ.-ից, սակայն այդ նկրտումները շատ ավելի իրագործելի դարձան 2018 թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո», - նշում է հեղինակը՝ հավելելով, որ դեսպան Մկրտչյանը տեսել է 13-րդ Սեյմի ներուժը եւ սկսել է աշխատանք տանել լիբերալ կուսակցությունների հետ:

Տիգրան Մկրտչյանի մասին հեղինակի հետ հարցազրույցում խոսել է լիբերալ պատգամավոր Ինես Վոյկան:

«Դա տեղի ունեցավ, որովհետեւ մենք ունեինք ակտիվ եւ բարեկիրթ դեսպան, որի համար սա առաջնահերթություն էր: Երբ մենք դարձանք նրա խմբի անդամներ, նա մեզ Facebook-ով հաղորդագրություններ էր ուղարկում գիշերվա ժամերին, նա մեզ «ռմբակոծում էր» սրանով..., որովհետեւ իսկապես առաջ էր մղում դա», - հիշում է Վոյկան:

Հոդվածի հեղինակը շեշտում է, որ հենց Մկրտչյանի կենտրոնացված ջանքերի շնորհիվ Լատվիայում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված արշավը սկսեց թափ հավաքել: Մկրտչյանը հանդիպել է Լատվիայի քաղաքացիական հասարակության անդամների եւ հասարակական կարծիքը ձեւավորողների հետ, իրազեկել նրանց: Այս նախաձեռնության մեջ նաեւ մեծ դերակատարում է ունեցել լատվիահայ Ելենա Եսայանը՝AP! կուսակցության գլխավոր քարտուղարը, որն անձնական հետաքրքրություն է ցուցաբերել այս գործում: Չնայած որոշակի դիմադրությանը՝ Եսայանն իր կուսակցությանը համոզել է աջակցել այս նախաձեռնությունը:

«Քանի որ Հայոց ցեղասպանության ճանաչումը գործնական փոքր արժեք ուներ Լատվիայի համար եւ հնարավոր անվտանգության ռիսկեր էր պարունակում, Եսայանի միջամտությունը շատ կարեւոր էր», - նշում է հոդվածի հեղինակը:

Նախաձեռնությանն են միացել նաեւ քաղաքական այլ ուժեր, իսկ Արտաքին հարցերով հանձնաժողովն ուսումնասիրություն է անցկացրել՝ համոզվելու, որ այդ առաջարկը վտանգ չի ներկայացնում Լատվիայի անվտանգության շահերի համար: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում մեծ է եղել նաեւ պահպանողական պատգամավոր Յուրիս Յուրաշի դերակատարումը, որի համար այս գործի հաջողությունն առաջնահերթություն է դարձել:

Բազմաթիվ խորհրդարանական ուժերի ներկայացուցիչների ջանքերի շնորհիվ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագծի քննարկումը ներառվել է 2021 թ. մայիսի 6-ի նիստի օրակարգում եւ նույն օրն ընդունվել է 58 կողմ, 11 դեմ եւ 7 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

«ՍՅՈՒՐՊՐԻԶ»

ՆՈՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ ՈՒ ՋԱՎԵՇՏԱԼԻ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Շուտով՝ մարտի 7-ից, հեռուստադիտողը հնարավորություն կունենա դիտելու բոլորի կողմից սիրված եւ սպասված «Սյուրպրիզ» սիթքոմի երկրորդ եթերաշրջանը:

ArmLur.am-ը նոր եթերաշրջանի մանրամասների, դերասանական կազմի եւ սցենարային նոր զարգացումների մասին զրուցել է սցենարիստ, դերասան Գարիկ Սեփխանյանի հետ: Նշենք, որ սիթքոմի սցենարի հեղինակները Գարիկն ու Գրիգորն են: «Այս եթերաշրջանում նույնպես նոր «սյուրպրիզներ» լինելու են, որոնց մասին չեմ ուզում այս պահին բարձրաձայնել, որպեսզի էլ ավելի հետաքրքիր լինի հեռուստադիտողի համար, բայց ինչպես առաջին եթերաշրջանի ժամանակ, այնպես էլ հիմա ուզում ենք էլ ավելի հետաքրքիր սցենարային լուծումներով լցնել սիթքոմը: Եվ կարծում եմ՝ այն մեզ մոտ ստացում է՝ հաշվի առնելով սիթքոմի ռեյտինգն ու հեռուստադիտողների բուռն արձագանքը: Գարիկի խոսքով՝ «Սյուրպրիզ»-ի դերասանական թիմին միացել են նոր կերպարներ՝ Մարիամ Ալեքսանյանը, Վաչե Երիցյանը: Այս պահին, սցենարային աշխատանքներին զուգահեռ, շարունակվում են նկարահանումները:

Հիշեցնենք, որ առաջին եթերաշրջանում հեռուստադիտողն ականատես է լինում՝ ինչպես է կալանավորված ամուսինը վերադառնում Հայաստան եւ տեսնում իր կնոջը, որը չսպասելով ամուսնուն՝ ամուսնանում երիտասարդ մի տղայի հետ, սակայն վախենում է այդ մասին պատմել նախկին ամուսնուն:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՄԱՐԴԸ

Ամերիկյան գործարար, գյուտարար Իլոն Մասկը դարձյալ գլխավորել է աշխարհի ամենահարուստ մարդկանց ցուցակը: Այս «տիտղոսը» նա կարճ ժամանակով զիջել էր ֆրանսիացի գործարար, Louis Vuitton Moet Hennessy ընկերության նախագահ Բեռնար Առնոյին: Մասկի հարստության աճին նպաստել է այն, որ Tesla ընկերության բաժնետոմսերի գինը գրեթե 70 %-ով աճել է: Դրա պատճառներից մեկն այն է, որ ընկերության էլեկտրական մեքենաների մի քանի մոդելների պահանջարկը մեծապես ավելացել է որոշակի գնիջեցումներից հետո: 51-ամյա Իլոն Մասկը, որն արդեն մի քանի ամիս է՝ նաեւ Twitter-ի սեփականատերն է, 2023 թ.-ի սկզբին ուներ 137 միլիարդ դոլար կարողություն: Այժմ նրա կարողությունը կազմում է 187 միլիարդ դոլար: Բեռնար Առնոն, որին Մասկը զիջում էր վերջին մի քանի ամիսների ընթացքում, ունի 185 միլիարդ դոլարի կարողություն: Երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Amazon ընկերության հիմնադիր ղեկավար Ջեֆ Բեզոսը (117 մլրդ), իսկ չորրորդ տեղում է ամերիկացի գործարար, Microsoft ընկերության նախագահ Բիլ Գեյթսը (114 մլրդ): Աշխարհի ամենահարուստ մարդկանց հնգյակը եզրափակում է ամերիկացի ամենահաջողակ ներդրող, Berkshire Hathaway ընկերության նախագահ Ուորեն Բաֆեթը (106 մլրդ):

2022 ԹՎԱԿԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացած ՖԻՖԱ-ի The Best մրցանակաբաշխության ընթացքում հայտնի դարձան 2022 թվականի լավագույնները: The Best-ի տարվա լավագույն ֆուտբոլիստի կոչմանն արժանացավ Արգենտինայի հավաքականի կազմում աշխարհի չեմպիոն դարձած Լիոնել Մեսին: Տարվա լավագույն մարզիչն Արգենտինայի ազգային թիմի գլխավոր մասնագետ Լիոնել Սկալոնին է:

2022 թվականի խորհրդանշական հավաքականի կազմն ունի հետեւյալ տեսքը՝դարպասապահ՝ Տիբո Կուրտուա, պաշտպաններ՝ Ժոաո Կանսելու, Վիրջիլ Վան Դեյք, Աշրաֆ Հակիմի, կիսապաշտպաններ՝ Կազեմիրո Քեւին Դե Բրույնե, Լուկա Մոդրիչ, հարձակվողներ՝ Կարիմ Բենզեմա, Էրլինգ Հոլանդ, Կիլիան Մբապե, Լիոնել Մեսի: Տարվա լավագույն դարպասապահն Արգենտինայի ազգային ընտրանու եւ անգլիական «Աստոն Վիլա»-ի անդամ Էմիլիանո Մարտինեսն է: Պուշկաշի անվան տարվա լավագույն գոլի մրցանակը ստացավ լեհաստանի հավաքականի եւ «Վարտա»-ի պարաֆուտբոլիստ Մարչին Օլեքսին: Լավագույն կին ֆուտբոլիստը «Բարսելոնա»-ի կիսապաշտպան Ալեքսիա Պուտելասսն է (Իսպանիայի հավաքական): Կանանց ֆուտբոլի 2022 թվականի լավագույն մասնագետ դարձավ Սարինա Վիգմանը, որը մարզում է Անգլիայի ֆուտբոլի հավաքականը: Լավագույն կին դարպասապահը «Մանչեսթեր Յունայթեդ»-ից Մերի Էրպսն է: Եվ երկրպագուների մրցանակին արժանացան Արգենտինայի ազգային ընտրանու երկրպագուները:

● *Մարտի 2-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա «Գալա համերգ / ՀՊԿՆ - 60» փառատոնը: Տոմսերի արժեքը՝3000 - 20000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուշացրել եմ վարկիս վճարումը, եւ բանկն ինձանից անհամաչափ տույժեր ու տուգանքներ է պահանջում, որոնք ավելի են անգամ մայր գումարից: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Հայկիկ Յավրյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Առաջնահերթ անհրաժեշտ է պարզել, թե Ձեր եւ բանկի միջեւ կնքված վարկային պայմանագրում որքան տույժեր եւ տուգանքներ են սահմանված վարկային պարտավորությունները ժամանակին չկատարելու համար, եւ, ըստ պայմանագրի, կատարել հաշվարկ: Եթե հաշվարկներում կառաջանան դժվարություններ, ապա կարող եք համապատասխան բանկի մասնաճյուղից վերցնել համապատասխան քաղվածք, որտեղ մանրամասն նշված կլինեն հաշվեգրված տույժերը, տուգանքները եւ մայր գումարը:

ՀՀ հարկադիր կատարման ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետք է հիշել, որ պայմանագրով որոշված տուգանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Շատ կաեւոր է իմանալ, որ որքան էլ շատ պայմանագրով սահմանված լինեն տույժերն ու տուգանքները, միեւնույնն է, պայմանագրով որոշված եւ կուտակված բոլոր տուգանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական՝ մայր գումարը:

ԷՋԸ՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ իմ խնդիրը լուծելու նպատակով դիմել դատարան, բայց չգիտեմ, թե ինչպես. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Միքայել Մարտիրոսյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ցանկանում եք Ձեր խնդրով դիմել դատարան, ապա անհրաժեշտ է պահպանել ՀՀ օրենսդրու-թյամբ սահմանված այն բոլոր ընթացակարգերը, որոնք նախատեսված են դատարան դիմելու համար: Դատարան դիմելու համար անհրաժեշտ է կազմել եւ ներկայացնել հայցադիմում: Հայցադիմումը պետք է դատարան ներկայացնել գրավոր: Կարող եք այն ներկայացնել ինչպես տպագիր (համակարգչով կազմված), այնպես էլ ձեռագիր: Միակ պահանջն այն է, որ հայցադիմումի բովանդակության մեջ նշված լինեն այն նվազագույն տեղեկությունները, որոնք պարտադիր են ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որպեսզի դատարանը վարույթ ընդունի Ձեր հայցադիմումը, պետք է վճարեք նաեւ օրենքով սահմանված պետական տուրքի գումար յուրաքանչյուր պահանջի համար: Եթե Ձեր պահանջը գումարային է, ապա պետք է վճարեք պահանջած գումարի 2%-ը, իսկ եթե գումարային պահանջ չէ, ապա պետք է մեկ պահանջի համար վճարեք 4000 դրամ գումար: Պետք է նկատի ունենալ, որ որոշակի պահանջների համար օրենքով ազատված եք պետական տուրքի վճարումից: Այդ դեպքերին կարող եք ծանոթանալ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Մարտի 1-ից սկսվում են Երեւանի համայնքային ծրագրերով նախատեսված մայրաքաղաքի Թամանյան փողոցի եւ Թամանյան-Իսահակյան փողոցների խաչմերուկների երթեւեկելի մասի ծածկի վերատեղադրման, բարեկարգման աշխատանքները. այն կտեւի մինչեւ ապրիլի 29-ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: